

### Արձանագրություն 3

«ՀՀԿԳՆԳՀԱՊԶԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գրասենյակային և համակարգչային սարքավորումների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

13.12.2017 թ.  
ժ.10:00

ք. Երևան

#### Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/  
Հանձնաժողովի անդամ՝ Մ. Աղայանց /գնահատող/  
Հ. Տոնոյան /գնահատող/  
Ա. Խաչատրյան /բացող/  
Հ. Գրիգորյան /բացող/  
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

#### 1. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին

(Մ. Կարախանյան)

1.1 ՀՀ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի և ՀՀ «Միկրոռինգ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

1.3 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի և «Միկրոռինգ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

#### 2. Գնահատման արդյունքների մասին

(Մ. Կարախանյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.3 կետով ընդունված որոշումը 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/ հայտարարել. 1-4-րդ և 6-8-րդ չափաբաժինների համար՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնի համար՝ «Միկրոռինգ» ՍՊԸ-ին:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

2.2 Գնման գործընթացը հայտարարել չկայացած 9-րդ չափաբաժնի մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի՝ ոչ մի հայտ չի ներկայացվելու հիմքով, իսկ 10-րդ չափաբաժնի մասով՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**







2.3 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

2.3 Ընտրված մասնակիցներին, անգործության ժամկետի ավարտից հետո, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

 Մ. Կարախանյան /նախագահ/  
 Մ. Աղայանց  
 Հ. Տոնոյան  
 Ա. Խաչատրյան  
 Հ. Գրիգորյան  
 Ա. Մարգարյան /քարտուղար/